

ՀԱՆԴԻՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Տ Ա Ր Ե Ր Ք

Կ Ե Ն Գ Ա Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

(ՏԵՇ Հասոր ԽԵ. Էջ 85)

Բ. ԾԱՍՔՈՂՈՒԹԻՒՆ

17. Եղաքղողորդիւնն. — Ծագողութիւնն գործանութիւնն մի է՝ որով կենդանին ատամանց ձեռօք կերակարները կը լիսու և կը բաժնէ, որպէս զի լաւագոյն կերպով զանոնք լորձնահոսութեան ենթարկէ և անոնց կլում զի բրացընէն։ Այսու ստամօքային մարտողութիւնն ալ կը դիւրանայ։

18. Եղաքղողորդեան գործարանք. — Ի բարձրագոյն կենդանիս, ինչպէս ՚ի Մարդու և յայլ Ստոնարու, ՚ի Զեռուն և ՚ի Զկունս, ծառագործեան գործարանքն առանձնենք են. իսկ ՚ի ատորնագոյն կենդանիս, օրինակ իմն ՚ի Միշտաս, ՚ի Խեցեմորթու, և յայն, սոյն պաշտօնը որիշ գործարանաց ձեռօք կը կատարի, այսինքն է ծնուններով։

19. Տարրարանական բաժադրորդիւն ատամանց. — Առամունք՝ մի կամ երկու և կամ ամերի յատուկ կիւտառածներէ կը բաղկանան. և թէպէտ ամենքն առատութեամբ իրենց մէջ հողային նիւթեր կը բռվանդակեն, բայց ներքին կապմութեամբ յիրերաց շատ կը տարբերին. սակայն զիստար և մանաւանդ կազմիշ նիւթերն երեք են։ Այս ամէն կենդանիք որ ստոյդ ատամունք ունին՝ ասոնց յատուկ կիւտառածն՝ փղոսկրն է. վասն զի ատամանց ներքին և ըլլիխաւոր մասն, և գրեթէ ամրող կրյան փղոսկրն կը կազմէ. և 20 - 30 առ 100 զոնդողանման գործարանաւոր նիւթէ կը բաղկանայ, 64 առ 100 լուսածնաս կրածնէ. Ա՚ի շափական մարդ՝ քանի մի հարիսրորդ ածխածնաս կրածնէ։ Ասկից աւելի խիս և աւելի պինտ ուրիշ կիւտառած մը բռաց կոչուածն է՝ որ խառ առ խառ ատամանց փղոսկրեր կետ կը խառնուի և անոնց մի ծածկէ. և որպէս զի ծառագործեան թեան միջոց կերակրոց շարունակ լիուրելէն շամշն զանոնք կը պաշտպանէ։ Իրերաց կետ կը

ցեալ մանրադիտական հատուածակողմն բիւրեներէ կը ձևանայ և ստորաբար 90 - 97 հարիսրորդ հանգային նիւթեր իւր մէջ կը բովանդակէ։ Բուռը ճշգիտ ապականման վերնամաշկի մը կրնանգ նմանեցնել ։ Հուսկ ուրեմն, բազմաթիւ ատամանց մէջ ուրիշ նիւթ մի ևս կը նկատենք որ ատամատները և պասական կը շնչապատէ և շաղուանեիր կ'ըստու. ուկերց շատ կը նմանէ և բազմակատ նիւթէ մի կը բաղկանայ։ Խոր պնդութիւնն փղոսկրէ և բռակ նըւաղ է, և բովանդակամծ գործարանաւոր նիւթըն՝ գրեթէ իւր կուռյն երրորդ մասն է։ Ի Մարդու քիչ կը գտնուի. բայց Եղանց մէջ առատութեամբ գտնուելով, տարրարանական խուզարկութեամբ տեսած են որ 42 առ 100 գործարանաւոր նիւթ կը բռվանդակէ, 50 առ 100 լուսածնաս կրածնի, և 4 առ 100 աժիան ծնաս կրածնի։

20. Առամանց ձևացումն. — Առամունք՝ կը զակային սոկերաց կամ ծնօտից մէջ գտնելող պատիճ անուանեալ և առանց բացաւածքի փոքրիկ թաղանթային պարկերէ կը զատուցուին։ Խակ կզակային սոկերց վրայի դասարկ տեղուակն, յորոց ատամունք կը բռանին կապիք անունը կը կրեն։ Արդ վերոյիշեալ ատամանային պատիճներն՝ կապճի խոռոշշ կը գրքաւեն, և իրենց մէջ կոնքէ կամ ընձիգ անուանեալ մասու կորիզ մի կը բռվանդակեն, յորս նրագոյն լույսին թեւեր և բազմաթիւ արինակալ անօթներ կը ճիւղարաժանին։ Ընձիւղը գոնդողային հիւթ մի կը ծորեցնէ որ զպասիք կը լնու. և ապա անոր վերին երեսի վրայ փղոսկրանման նիւթոյ քանի մի հատեր կը հանգեցնէն, որց վրայ գարձեալ նոր քանակութեամբ նիւթ յաւելլով կը մեծնաս, և այնպիսի եղանակաւ իրերաց հետ կը միանան։

մինչև իրենց ծագութիւն տուրդ մսուտ կորիզը կը շրջապատէն։ Այսպէս ձեւացած հաստատուն պատեանն ընդիւ զընձիր կը ծածկէ։ և ակռան խաւ առ խաւ կը սկսի բարձրանար վանի որ փղոսկեր խսաերը հետզինտէ կը բազմանան, մսուտ կորզը տարածոցն ալ նուազերլվ նեղ անցքը մը մէշ կը սեղմուի. և փղոսկը սկսի կայ շրջապատելով իւր չոր կողմն կը թանձրանայ. այսու կորիզն ատամանն արմատին կերպոնը կը գրաւէ։ Երբ ընձիրդն մի կէտով միայն պատճի յատակը կը լույս ըլլայ՝ ակռան մէկ արմատ միայն կ'ունենայ. իսկ երբ այլ և այլ կէտօրով անոր յատակը հաստատուի իւրաքանչիր կէտօրը նոյնքան արմատոց կը փոխարիկին։

Որչափ որ ակռան աճի նոյնքան ևս կապճէն վեր կը բարձրանայ. և զինդ բանալով կը սկսի արտաքր բուսնիլի Սակայն յառաջ քան զայս, բուռն որ ատամանին կապճի զատուցումն է, ատամանն մակերեւյթը կը ծածկէ, որոյ պնդութիւնն բատ ամաց և բատ անհատից կը տարբերի։ Երբ ակռան կատարելապէս ձեւացած, և ատամանին ընձիրդը կապճի յատակը հաստա-

տուած է, ալ աճմանէ կը դադրի. և արեան սնուցի անօթները կրացին նիւթով կը դոցուին։ Այսպէս ձեւացած ատամն իրեք մասերէ կը բարդկանայ. ազատ մասն՝ որ բըուով ժամկուած է և ծակման կը ծառայէ պսակ կ'անուանի. ծնօտի մէջ հաստատուածն՝ արևոտ. իսկ ասոնց միջամցյրը գրաւող մասն որ զպսակ արմատի հետ կը միացընէ, ատամանկայ կ'ըսուի։

21. Զանգան տեսակը ատամանց ։ Ամէն կենդանեաց մէջ ատամնենք ծավամն չեն ծառայեր. վասն զի բազմաթիւ Զեռունք և Զըկունք՝ առանց իսկ բաժնելու զկերակորս կը կլեն, անոր համար այս կենդանեաց իրեւ պաշտպանութեան զէնք և ուներթիեան գրծարաններ են. խիստ բազմաթիւ կ'ըլլան, և գրեթէ ամէնքն ալ հաւասարապէս միաձև, կոնաձև, կորաձև և արած այր՝ բայց եթէ ստոյդ ժապօղութեան ծառայելու համար են, ըստ զանազանութեան պատամանց ձևերնին ալ կը տարբերի. Զասոնք իրեքի կրնակն բաժնեն. Հերձատամունք կամ Անպաձն ատամունք, Շնատամունք կամ կոնատամունք և Աղօրիք (Ձև 22)։



4. Հերձատամունք : 2. Շնատամունք : 3. Փոքր աղօրիք : 4. Մեծ աղօրիք :

Հերձատամունք. — Հերձատամունք՝ սովորաբար փոքր են, ձնշալ և հասու. ծնօտից առջևի մասը կը գրաւեն, և զիերակուը անմիջապէս առաջին անգամ բաժնելու կը ծառային։

Շնատամունք. — Շնատամունք կոնաձև են՝ զանազան երկայնութեամբ և ստուարութեամբ խոտակեր կենդանեաց մէջ, ինչպէս Եղանց և Ոչխարաց, կամ բոլորովին կը պակսին և կամ քիչ ձեւացած կ'ըլլան։ Այնենակերաց, ինչպէս Մարդու, կապիկ, ջղլկանց, և այլն, միակ են։ Բնորովին մասկեր կենդանեաց մէջ, օրինակ իմն Ախճուց, Յովազներու, Ընձառիւծուց՝ ստուարագյուն, զօրաւոր, երկան և կոր են։ Շնատամունք անմիջապէս հերձատամանց կը յաջորդեն և առ առաւելն թուով չոր կ'ըլլան. ի Մասակերս՝ որպէս բանելու և զայն յօշուելու կը ծառայեն։

Աղօրիք. — Աղօրեաց ձևնեն և կազմութիւնն ըստ անդեւան կենդանւոյն կը տարբերի։ Ասոնք երկու տեսակ են, փոքր և մեծ աղօրիք (Ձև 23)։

փոքր աղօրիք որ ծնօտից իւրաքանչիւր կորզման վրայ երկերլու թուով կ'ըլլան անմիջապէս շնատամանց կը յաջորդեն. իսկ մեծ աղօրիք՝ կզակային սոկերը յետակողմը կը գրաւեն, և իւրաքանչիւր կողմն իրեք են թուով Ամէնքն ալ կապիճներու մէջ հաստատապէս ամբացած են և ծայրաբու ծափօղութեան կը ժառայեն։ Ամենակեր կենդանեաց մէջ ազօրեաց պասկն գրեթէ տափակ և բութ կամ բորորաձև փափկներով ժամկուած է։ ի Միջատակերս (Ձև 24) պրածայր են որք ընդդիմանիք ատամանց վրայ գոնուող փոսերուն կը համապատասխանեն։ Խոտակերաց մէջ (Ձև 25) հարթ են և տեղ տեղ խորտուարուտ։ Պտղակերացը (Ձև 26) բոլորաձև փափիկներ ունին, իսկ ի՛ հաղղակերս (Ձև 23) թէպէտ սակաւաթիւ՝ բայց պնդակազմ են, ձնշալ, հասու պսակաւ և մկրասի լեզուաց նման իրերաց ընդդիմադիր, իրենց ատամունքն այսպիսի դիրք մի ունենալով զմին դիւրա կը մամրեն։

Վերցիշեալ այս երեք տեսակ ատամունք,

հաւասարապէս ամէն կենդանեաց մէջ չեն գտնուիր: Կատարեալ ատամնային դրութիւն ունեցող կենդանիք են կապիկը, Գիղէք, վայրի Գազանք և Փոկը: Գայով միւս կենդանեաց, Նապաստակը և Արշամկունք շնատամունք չու-

նին. Եղանց վերի ճնօտին վրայ հերձատամունք կը պակին: Կարճոտն կենդանեաց և Մեծագազնաց մէջ հերձատամունց հետ միասին և շնատամունք չեն գտնուիր: իսկ Մըննաբաղդէ և ոչ ատամնաց հետք ունին:



Զե. 23
Ատամնաք Շաղակեր կենդանեաց



Զե. 24
Ատամնաք Միջամակեր կենդանեաց

22. Նորոգումն ատամնանց.—Այսին ատամնաշորտքիւն: —Նորածին մանկան ատամնանք դեռ քիչ ձևացած են, և սովորաբար առաջին տարույց յետին վեց ամսոց մէջ կը սկզբանին ատամնք երկենար Ամենն առաջ ստորին ծնօտի միջին հերձատամունքն կը բռունին, ապա վերին ծնօտի, և յետոյ այլք կարգաւ ասոնց կը յաջորդեն, բաց ՚ի շնատամանց, որք սովորաբար անմիջապէս շրու փոքր աղօրեացմէ առաջ կը սկսին երկենալ: Այս առաջին ատամնառութիւնն ընդհանրապէս նորածին մանկանց երկրորդ տարույց յետին ամսոց մէջ կ'աւարտի: այն ատեն ատամնանց թիւն քանն է: ամէնքն ալ ժամանակառոր, և երկրորդ ատամնաւորութեամբ պիտի փոփոխին:



Զե. 25
Ատամնաք Խոտակեր կենդանեաց



Զե. 26
Ատամնաք Գաղակեր կենդանեաց

Երկրորդ ատամնատորութիւն: —Մանկան վեց ու կէս տարբաւանէն սկսեալ մինչեւ եսթներորդ տարին՝ երկրորդ ատամնաւորութիւնն կը սկսի: Ծնօտից իւրաբանչիւր կողման վրա գտնուող երկերկու փոքր աղօրեաց երրորդ մի կը յաջորդէ որ եօրնաւեան ատամն կ'ըսուի. մի և նոյն միջոց նաև ժամանակառոր ատամնանց կամ կարճանամանց արմատոն կը խամստին և կ'իյնան. ապա ըստ կարգի իրենց անկման նշդի նոյն կարգաւ ալ կը նորոգուին: Վակայն հերձատամունց նորոգութիւնն որ քիթէ եղթը տարուան մօտ կը սկսի իններորդ տարույց մէջ կ'աւարտի: և անկից ետքը գտադրման ժամանակէ: Մերձ տասներորդ տարուան՝ առաջին փոքր աղօրի ատամն կը բռունին, այն պատճառաւ իրենց բերնին մէջ ծամելիք և ծնօտք թելանման կ'եր-

կէս տարբաւանէ մինչեւ ցմետասաներորդ տարին՝ ճնօտից իւրաբանչիւր կողմն երկու մեծաղօրի ատամնանք կը սկսին երկենալ հուկ ու բեմն տասն և ու բեմ տարբաւանէ մինչեւ ցըսան և հինգ տարբաւան միջոց՝ յետին աղօրի ատամնանք կամ ինմաստորհան ատամնանք կը բռունի:

23. Ծնօտք: — Ինչպէս ըսինք, աղօրին դասու կենդանեաց ծագողութեան գործարանքն ծնօտք են (Զե. 27). և ըստ զարմից ասոնց



Զե. 27. Միջամակ մը ծագողութեան գործարանք

ձևն ալ կը տարբերի: Միջամակ մէջ թուով շրու են, երկու վերին և երկու տառիքն, վերինք, որ ճիշտ խօսելով ծամելիք կ անուանին, կոնաձև են, կոր, արածայր, պինս և եղիներայ. իսկ ստորինք և կամ ստոյդ ծնօտք տոլրաբար յերկու յօդաւորեալ մասանց կը բաղկանան: Յետինք ննշեալ են և զանազան կերպով ատամնաւորեալ. մանգազաձև և ոչ այն քան պինտ. եղիներա-թաղանթային հիւթէ կը բարձկանան, և շշակութէ աննանեալ երկու՝ երրեմն նաև շրու յօդաւորեալ յաւելուածք ունին: Ֆամելիք մանդաբար նիւթերը կ'առնուն, և ծնօտք զաննեք կը ծագեն. ժագողութեան միջոց երկուքն ալ հորիզոնական դիրք մը կը սոսնան:

Քանի մի Միջամակ, որովհետեւ միայն հեղանիւթովք կը սնանին, այն պատճառաւ իրենց բերնին մէջ ծամելիք և ծնօտք թելանման կ'եր-

կը նոնան, և պատիճ կամ ծծիչ գործարան մի կը կազմեն (Ձև 28). Խոկ 'ի խեցեմորթս (Ձև 29) ծնօտքն կրային են, զօրաւոր, թանձր և բռթ:

24. Կը կրկնենք ժարձրել թէ զերակուրա աղեկ ծաքբեն մեծապէս կարևոր է. Նախ և առաջ՝ որպէս զի ասոնք նեղ անցքէ մը կարենան դիւրաւ 'ի ստամբս ինչնել. և երկրորդ՝ եթէ ասոնք աղեկ կամ գէջ ծաքուելու ըլլան, ըստ այնմ մարտողութիւնն ալ երագ կամ դանդաղ կը կատարուի. վասն զի կերակուրք որշափ որ




Ձև 28. Նէմատորին երկայնակընծիբ

շատ բաժնուեին՝ այնչափ ալ մեծ մակերեւոյթ մի կը ստանան, և հետևաբար որովայնի մէջ զըտնուող հեթերն զաննոնք մեծաւ դիւրութեամբ կը լուծեն և կ'այլային:

Գ. Լորձնահոտորիւն

25. Լորձնահոտորիւն. — Լորձնահոտորիւնն գործառնութիւն մի է՝ որով կերակուրք որշափ ծաքուելու ըլլան այնչափ ալ տողիամբ կը թաթիին: Այս գործողութեամն ծարդողութեան հետ կը կատարուի. ի ստամբս անցքը դիւրացնել, և մանաւանդ թէ տափկաց տարրարանական ազդեցութեամբ մարտողութեան նըպաստել: Տնողուկը թերնի լրջակաց գտնուող յատուող յատուող կը կատարուի: Ենուու կը թերնի լրջակաց գտնուող յատուող յատուող կը կատարուի (Ձև 30): Անրակայինք և ենրակեզրային գեղձք:

Յարականէ գեղձք՝ որ միւսներէ շատ աւելի մեծ են, ականչաց մօտ առորին ծնօսար յիտաւ կողմէ կը գտնուին: Հատաւոր բլթակներ և բլթակիկներ բաֆնուած յատուկ նեարդային պատենով մի շրջապատեալ են, և այս հատերէ փոքրիկ արմաններ մեկնելով Արևինի անցք կոչուած կղկղանցքի մէջ իրեւաց հետ կը միանան: Ասոնց միջին կշիռը 26—28 կրամ է և իրենց բաղկացութեան մէջ նաև չնչերակներ, զերեր և Քիչ քանակութեամբ նաև խորշային հիւսուած ալ կը մտնայ: Ենրակայակային գեղձք, որ ճշգիւ առաջնոց կազմութիւնն ունին, ծնօսի անկեան մէջ զետեղուած են. իրենց տարածոցը յարականջ գեղձքերէ շատ աւելի նուազ է, և 7—8 կրամ կը կընեն: Ասոնց Ուորրընի անցք կոչուած կղկղանցքը լեզուակապի կողոյն վրայ կը բացուի: Ենրակեզրային գեղձք, ինչ-



Ձև 29. Խեցքան

պէս յանուանէն խոկ յայա է, լեզուի յատակը՝ լեզուակապի ալակողմն և ձախակողմն կը գտնուին, ծնօսար երկու կողմանց դասարկ միջոցին մէջ Մեծութեամբ նշոյ մի չեն հատասրիր. իրենց միջին կիշուն է 2—3 կրամ. վերոցիշնալ գեղձերու կազմութիւնն՝ միանգամայն բազմաթիւ կղկղանցք ունին: Այս ամենայն գեղձք տողու անուանեալ հերանիւթը կ'արտադին, ուսկից տարրաբանական միրութութեամբ 'ի մասնաւորի հետեւել նիւթերը զըտած ուստած են, այս ինքն, ջուր, քրորուկ նատրոնի, նատրոն, կալիքարային կաթնասոք, և այլն:

26. Որինաւորաց տողիային կազմարաննե. — Որինաւորաց կենդանեացմէ: Ստնաւորաց մէջ միայն տողիային կազմարանը խիստ զարգացած է, թէպէտ և յումանս, ինչպէս 'ի Կիւտագիի, կը պակսի կամ թէ Հազիր տարրական է: Սակայն ցամաքային Ստնաւորը, մանաւանդ բուսակերը, միւս Ստնաւորացմէ շատ աւելի զարգացեալ տողիային կազմարան ունին: Այս գեղձերը յատուկ անցքերով բերնի հետ կը հաղորդակցին և անոր մէջ զտողուկ կը հերուն: Գլխաւոր գեղձերու թերանները՝ մասմբ մէջ մէջնարդէմ են վերին ազօրեաց. այլք իրուակապի առնելը կամ կողմնակի կը գտնուին, քիչ մը յետո կյու 'ի հերձատամանց և 'ի չնատամանց, և երբեմն նաև չնատամանց ուղղութեան վրայ: Առաջնոց հիւթն 'ի մասնաւորի աղօրիքներէ ծապեալ կերակրոց հետ կը խառնուի.

իսկ յետնոցն՝ հերձատամանց կորած կամ շնաւտամանց պատառած կերակորքը կը թանայ:

Տողկային կազմաբանն թվանոց մէջ՝ 'ի Ստուատոր ու ունեցած կարևորութիւնն չունի. գասն զի տառախնք, այսպէս ըսնենք, զերակորոր առանց ծագքելու կը կլլեն: ի Թուշոնս ստղկային գեղձերու տեղ գտնուող գեղձք լեզուի տակ զետեղուած են, և իրենց զատուցած հիւթը բերնի շրջապատճեն և անդարար նիւթոց մակերևոյթը կը թանայ, որպէս զի ատոնք աւելի դիւրութեամբ ստրանք մէջ ասհին, և կենդանին զանոնք դիւրա կարենայ կլլել:

27. Ձեռուց տողկային գեղձերը՝ կազմոթեամբ Ստուատորաց գեղձերուն կը նմանին, առկայն աւելի սպնդային են. սովորաբար տողկային կազմաբանն լեզուի մէջ և ծնօտից եղաղըն գտնուող ենթալրձնաւոր գեղձերէ կը բարդկանայ. Այսպէս օրինակ իմն, Կրայից լեզուին մակերեւոյթը թիթեղաց նման մանր և անամեջ գնդակներով ծածկուած է. այս զընդակներն իրենց արիստոով գեղձային կոյտի մը վրայ կը միանան որ լեզուի դիմուոր մասն կը կազմէ:

28. Յօրինուած ժամբորուքան և յորձնահուորին. — Այս երկու գործողութիւններս մի և նյոյ ժամանակ կը կատարուին: Բնենի մէջ գտնուող կերակուրները՝ լեզուն գէպ՝ 'ի քմաց գմբեթն և կամ գէպ՝ 'ի ծնօտ ննչելով զանոնք կը բաժնէ, և կամ, եթէ քիչ մը հաստատուն մարմինք են, կը լավախսէ, իսկ եթէ կարծր են, գէպ յատամունս կը մղէ, ուր հերձատամոնք զանոնք կը կորեն, ննասամնենք կը պատառեն, և աղօրին մը մանրեն: Մի և նյոյ ժամանակ բերնի մէջ առատութեամբ տողուկ կը հոփ, որ կերակրոց հետ լաւ մի շաղուելով զանոնք կը կակազարնէ. ծապքորութիւնը կը դիւրացընէ, և կման մեծապէս կ'օգնէ:

Դ. կողովն

29. Կողովն. — Կերակրոց բերնէ գէպ՝ 'ի աստամոր ըրած անցքն կումսն կը կոչուի: Կման ծառայող գործարանք են բերան, առողջաբերանք և ստուգ:

30. Բերանն՝ որ և բերանային խոռոշ կ'անուանի, մարսական անցից անդաստակն է: Այս տարուած լրթանց և այտից մէջ ամենի գործուած է, 'ի վերաստ և 'ի յետուա՛ քմաց պատրուակաւ, իսկ ստորին կողմը լեզուն կը գտնուի. իսկ գէպ յատաւ և կողմանակի՝ կապճային և ատամանային կումսները զայն կը լրապատճեն: Շրթուանք՝ երկու մինաթաղանթային ծալքերէ կը բարձիանան, որք իրենց շարժմամբ մարսական խորդավակի մուտքը կը փակեն կամ կ'ընդարձակեն: Զանազան կարգերէ ձեւացած են, մին ներքին

կամ լրճնաւոր, երկրորդն միջին կամ մինային, որ զիթիթէ ամբողջապէս զբանց ստուարութիւնն կը կազմէ. իսկ երրորդն արտաքին և մորթային կամ ճշշ խօսելով մորթը: Նըրթունը ծապուրութեան և ձայնի կազմութեան մեծապէս կարևոր են, և զիմաց զգացմունքը կը քացայացտեն:



Զե 50. Ցարականջ գեղձք


թերանոյ կողմնակի անջրպետք պյտերէ կը ձեւանան, որք լրթանց նման այլ կարգերէ բարդացեալ են. ասոնցմէ զիմաւորն է մինայինն որ զիթիթէ ամբողջապէս այտից ստուարութիւնն կը կազմէ: Իսկ վերին անջրպետն զիթիթ բողորդիկն քնաց վերերէ կամ 'ի քնաց կը ձեւանայ (Զե 31. 2, 44.) որ իրեք կարգէ կազմուած է. մին վերին և սոկրային, միւսն ստորին կամ յորձնաւոր, և երրորդն միջին կամ գեղձային: Քմաց յետին ծայրը մկնաթաղան. թին միջնացանկ մի կայ քնաց պատրուակ (Զե 31, 42) անտամք՝ որ բերնին և ստուարերանին մէջտեղ կը գտնուի, և անզային խորժերու յետին ծակենն մարսական անցերէ կը լրացնէ:

Քմաց պատրուակին ստորին եղերքը զանցիկը կը վերջանայ՝ որ մկնաթաղանթային կոնածե յաւելուած մէջ: Այսոր երկու կողմերէն մէկմէկ զյոյ ճիւղերէ կ'երկրնան որք վերին մասամբ իրերաց հետ միացած են, իսկ ստորին կողմանէ յիրերաց կը բաժնուին և քնակայ մորք անսունը կը կրեն (Զե 31. 21, 22): Այս մոյթերէն, որ թուուվ շրուեն, երկուքն առնեի կողմն լեզուուն վերիբուն վրայ կ'ատարան: իսկ միւս երկուքն յետս կոյս՝ ստուգնարերնի կողերան վրայ, և ասոնցմէ իրաքանչիւնն վերին կողմն նեղ և ստորին կողմն լայն կամարի ձեւն ունի: Քմաց մոյթք՝ երկու կծկանան օղակներ կը ձեւացընեն. մին առաջակազմեան՝ որ զգարան ստուգնարերնի հետ կը հազրողակցէ և փողանցը իշտաւի. միւսն յետակողմեան՝ որ զսուզնարերան անգային յետին խորչերէ կը զատէ: իսկ առաջակազմեան և յետակողմեան քմակալ նեցուկն յիրերաց բաժնուղ անջրպետի մէջ

կոյտ մի լորձնաւոր փշտիկը կը գտնուին որք նշագեղջք անուանեալ երկու ծուածն գեղցային մարմինները կը կազմեն:

Հուսկ ուրեմն, յետին գործարանն որ իբրև բերնի յատակը կը կազմէ, և բազմաթիւ կինդանեաց մէջ կիման մեծապէս կը նպաստէ՝ յեզուն կը համարուի (Զե 31. 16. 17. 18): Արտաքս ցցուած գործարան մի՛ որոյ առաջակողմն ազատ և շարժականէ, իսկ ետևի մասամբի երկանի ու ուկիր (Զե 31. 8): Փայտ հաստատուած կը կենայ: Գրեթէ միայն լորձնաթաղանթիւ ծածկուած մկոնքներէ կը բաղկանայ, և վերուստ

դէպ'ի վայր տափկած թերատոածնի մը կը նմանի որոյ յետակողմն յապատեալ է: Ամենայն Ողնառոք մսուս մեզու չունին. քանի մի դաստիարակութեաց, ինչպէս Ձկանց և թունոց, կարծր է և զիխաւորաբար աճաւաներէ և յոսկերաց կը բաղկանայ բայց ՚ի Ստնաւորս, ՚ի բազմաթիւ Ձեռունս և յերկակենցաղը՝ բոլորովին մսուտ է: Թաշնոց լեզուին հետ միշտ ուկր կամ աճառ մի միացեալ է՝ որ լեզուին ուղղութիւնը կ'ունենայ և երկանի ուկեր ծայրը կը յօդաորի: Ձկանց լեզուն գրեթէ անշարժ է: ասոր հետ ալ սովորաբար ուկր մի կը միանայ՝ որ երկանի



Զե 31. Հաստարաբաժին հատած դիմաց և պարանոցի վերին մասին որով կը ցուցուի բերնի ունեցած հաղորդակցութիւնը անգամին խորշեաւ, ստուգաբերի և խռափացի հետ:

1. Զախակողմեան ռունզն: 2. Անառ. քթի, որոյ ստորին եղերը (5) կը ծառայէ դէպ'ի վեր բարձրացնեալ զուգակցաբար մի և նյուն ռունզն արտաքին անշրջաբար: 4. Քթի բաժանման անառին ներքին ժիշտ եղերեաց և վերին խողովակ: 6. Միջին եղերեաց և միջին խողովակ: 7. Ասորին եղերեաց և ստորին խողովակ: 8. Խոճճ սեպուկացին: 9. Ենուն խոռոչ անգային խորշերու: 10. Ներքին մասեակ կամ խորսի Ծառատաքեան փողոց: 11. Խորին գողացուու: 12. Պատրուակ քմաց: 13. Անզաստակ բերանու: 14. Գմբեթ քմաց: 15. Սանեակ ընդ մէջ անդաստակի և բան քերի: 16. Առաջախղզման և նորիզունկան մասն լեզուի: որ թերնի յատակը կը ձևացնէ: 17. Լեզուի միջին ներպացին շերու: 18. Կզակալեղուային մուկն: 19. Կզակային և երկերի ուկեր մուկն: 20. Հաստ աշօրիական և երկերի ուկեր մկանց: 21. Առաջակողմեան քամկալ մոյթ և պարապակ քմաց: 22. Ենուն կողման գմակալ մոյթ: 25. Նշագեղի: 26. Լեզուակին մասն ստուգաբերանի խորշեր: 27. Նշն խոռոչ խռափացին մասն: 28. Բուռուպող խոռոչն: 29. Փորոք խռափողը: 30. Մակալեղու: 31. Հաստ երկերի ուկեր: 32. Հաստ վաւանակերպ աճառիք: 33. Արքին եղերը նյուն աճառիք: 34. Թաղանթ վահան-երկեղուային ուկեր: 35. Հաստ յետակողման մասին ուղակուձ աճառիք: 36. Հաստ նյուն աճառիք առաջակողմեան մասին: 37. Օլու կամ-վահանակերպան աճառաւ:


սակեր հետ կը յօդաւորի : Առնաւորք երենց լինուին ստորին ծայրը՝ խարսիխն հետ միացած մակայեցու (Ձև 31, 30) անուանեալ մարմին մը կամ լաւ ևս նեարդ - աճաւուու դռնակ մ'ունին՝ որ խոշափող վերին բացուածքին վլրայ կը գտնուի Ավիկայ կերակրոց վերցիւեալ գործ արանի մէջ մուտքը արգիթելով՝ զանոնք ուղարկի բերնէ դէպ՝ 'ի ստուգնաբերան կ'իջեցնէ : Այս գոնակը 'ի մարդք գրեթէ ձուածե է : 'ի թոշունս, 'ի Զկունս և 'ի բազմաթիւ հեռառնս կը գտնուիր :

31. Ստուգնաբերան . — Կլման զլիսաւոր գործ արանը ստուգնաբերանն է . մինաթաղանթային ձագարածե անցը մի՛ (Ձև 31, 26, 27) որ գանկի արմատէն մինչեւ ցատուզն կ'ընդարձակի և յետնովս կը շարունակուի բերնի կը յախորդէ և իրը անոր յետին խոռոշ մէ է : Երեք կը ծկիչ մկունքներէ կը բաժկանայ, որք են վերին, միջին և ստորին . այս մկունքները 'ի ներքուատ լրդանթաղանթիւ ծածկուած են : Ստուգնա-

բերնի կազմած խոռոշը միանգամայն թէ մարսողութեան և թէ շնչառութեան կը ժառայէ :

32. Ստուգն . — Ստուգն մինաթաղնաբերային անցը մի է որ ստուգնաբերնի կը յակորդէ և ըզկերակուրտէպ՝ 'ի ստամոք կ'իջեցնէ : Ստուգնաբերանը բերնէ շատ աւելի նեղ է, իսկ ստուգն ալ ստուգնաբերնէ : Ի բազմաթիւ Ովնաւորս ստուգն թէ և լայն է՝ բայց ամենակարճ . ընդհակառակն 'ի Ստուգնարս և 'ի թոշունս երկարացնին՝ սակայն միանգամայն նեղ է : Իսկ 'ի Մարտու զրեթէ գանաձեւ է և երիւու պարուտակներէ կը ձեւնանայ, մին ներքին և լրդանաւոր . միւսն մնուտ, ստուար և մեծաւ մնասմբ մկնային ողորկ նեարդներէ բաղկացած՝ որք երկու կարգ են : Ստորգն ստորին ծայրը՝ բասամոքսի հետ կը հաղորդակիցի :

33. Յօրինուած կլման . — Ծավաղողութիւնն և լրդնահոսութիւնն աւարտելով, լեզուն տողկամք շաղեալ կերակուրը կծիկ անուանեալ



Ձև 32. Կարդի մարտզական կազմարան

կցոտի մը ձևով իւր փան կը հաւաքէ . և ապա ազատ ծայրը վեր բարձրացներով՝ զայն մինչեւ քմաց պատրուակին կը մերձնեցնէ, այսու կը ծիկը լեզուի և քմաց մէջ սեղմելով՝ դէպ՝ 'ի փողանքը կը մղուի (Ձև 32) : Նայն միջաց քմաց պատրուակը կը բարձրանայ և ստուգնաբերնի խոռոշը՝ ռնգային խորերու յետին բացուածքներէն կը բաժնէ . լեզուի արմատը բազմաթիւ մկանց ձեռաք վեր կը բարձրանայ, և կծիկը ամենայն մասամբ ճնշուելով՝ նշագեղձից և անոնց շրջակայ մասամբ փայէն կը սակի որպէս զի 'ի ստուգնաբերան մօնէն : Աստ' ունգային

խորերու մէջ չի կինար, մոնել, վասն զի քմաց պատրուակը զայն կ'արգելու . դարձեալ անհնար է որ կարենայ 'ի խոշափող երթալ՝ որովհետու մակալէ զուն զայն կը փակէ . ուրեմն ըրունադատեալ պէտք է որ 'ի ստուգնաբերան իշնէ : Այս ատեն ստուգնաբերնի մկունք կը սկըսին ամփոփի և կծիկը 'ի ստուգն կը մղուի : Վերցոյք եղանակաւ հազիր թէ գործողութիւնն կ'աւարտի, խոշափողը իւր առաջին դիրքն կ'առնու, մակալէ զուն կը բարձրանայ, խոշաբերանը կ'ընդարձակի՝ ոգոյ մոփից տեղիք ատալու համար, և հուսկ ուրեմն ստորգան

բողոքածն նեարդները հետզիւտէ վերուստ 'ի վայր կծկելով՝ զկերակուր դէպ 'ի ստամբս կը մղեն:

Ե. Խախացումն


34. Խախացումն. — Երբ կերակուրը բաւական ատեն ստամբսի մէջ կը կենան, առանձ քանոյզի լուծիչ ազդեցութեամբ, որ նոյն գործարանի շրջապատէն կ'անջատի, և միանգամայն կենսական զօրութեանց ներգործութեամբ՝ խախաց անուանեալ նմանաման խիւս մը կը դառնան: Աշաւասիկ այս գործառութիւնը խախացումն կամ ստամբային մարտուրութեամբ խախացումն կը կորուի:

35. Ստամբս. — Մարսողութեան զլիսաւոր

գործարանն ստամբսն է: Ի Մարդու տկի նըման թաղանթեայ պարկէ մի կը ձևանայ՝ որ իւր լայնութեամբ որովայնի վերին մասին վրայ գետեղուած է (Ձև. 33): Զախակողմանէ դէպ յաջակողմն աստիճանաբար սեղմուելով՝ ինքն իւր վրայ կը հակի: այս պատճառաւ այ իւր վերին երեսը գոյգաւոր և ամենակարճ է, իսկ ստորին երեսը կորնթարդ և երկարագոյն: Ձինքը ստորգան հետ հաղորդող բացուածքը ստամբսարերան կ'անուանի, և ընդերաց հետ հաղորդող սր: Ստամբսի շրջապատն խիստ ձողտական է: գասորակի եղած միջոց կը կծկի, որով և ներգին երեսը բազմաթիւ ծալքերով կը լեցուի. մինչգետ ընդարձակելով՝ կ'անյաց տանան:

Ստամբսը պատող լորձնաթաղանթին երե-

լուրդ սառց վասն




Ձև. 33. Մարդու մարտզական կազմարանն

ու, ստամբային փշորիկ անուանեալ անթիւ փոքրիկ խոռոշիւթեամբ ծածկուած է՝ որք ստամբանոյց յառաջ կը երեն և զայս կերակրոց վլրայ կը հեղուն: Ստամբահոյզը մարսողութեան ծառայող կարևորագոյն ազդակներէն մին է, վասն դի իւր ազդեցութեամբ կերակուրը 'ի խախաց կը փոխարիկն Գործարանն դատարկ եղած միջոց, այս հեղանիւթն սակաւագոյն քանակութեամբ կը ձևանայ. բայց երբ գործարանի շրջապատքն կերակրոց և մանաւանդ հաստատան կերակրոց ազդեցութեամբ զգառուին, այն ատեն ստամբահոյզն աւելի առատութեամբ կը հուսի:

Ստամբսի մէջ հաւաքեալ մննդաբար կերակուրք որսվայնի մինային շրջապատից արգեցու-

թեամբ զօրաւոր կերպով կը ճնշաբին. և մինչեւ իսկ ստորգան մէջ կը նան բարձրանալ, եթէ այս փորյն ստամբարերնի մերձակայ գոնուուղ մասն մինային նեարդից կծկմամբ փակուելու շըլլայ. Երբեմն վերսիչեալ ընդդիմութիւնն թուլանալով կերակուրք մինչև ցրերան յետո կը դառնան կամ արտաքս իսկ կը գեղանին: Ցեսին երևայթքս վերպերումն և փախումն կը յորջորին: Միւս մասամբ, կերակուրք չեն կը նար իսկոյն 'ի ստամբսէ յընդերս ինսել, վասրը զի սորոյն բացուածքն զինքն մշակասող մինային նեարդից կծկմամբ պնդապէս փակուած է: Ուրեմն միանգամ 'ի ստամբս մըտնելէ եւու հոն կը ման, և գլխաւոր մարտուրութիւն գործարանի միջամին սպառուածին մէջ կը հա-

ւարին, Աստամդասի մէջ մանուղ նիմթերէ ումանք, պարզապէս անոր կողերէն ծծուելով՝ առանց նախնական այլափոխութիւն մի կրելու ուղղակի արեան հետ կը խառնուին, այսպէս չուր, ուկար արքող և ուրիշ քանի մի հերանիթքը : Ումանք ընդեմուս կ'անցնին առանց այլափոխութիւն մի կրելու և ապաւառաց հետ արտաք կը մղուին : Խակ մասցեալք մասամբ նոյն գործարանի մէջ կը մարտուին, և աստամդակոյզի ձեռօք խարս անուանեա կիսկեղանիթ խիստ զանգուած մի կը դառնան՝ որ ընդհանրապէս քիչ մը գորչաքոյն է, յատուկ և անախորդ հոտ մի ունի, և կերակրոց մասցորդաց հետ խառն կ'ըլլայ:




Զե 54. Զբանուկն

36. Զանազան դաստ կենդանաց մէջ առամբարի փափուուրիւնքն . . . Յայլ և այլ դաստ կենդանին ստամդան զանազան ձև և մեծութիւն կ'ունենայ : Քանի մի ստորին դաստ ՈՂնաորաց մէջ ընդեմուս հետ կը չփոթի, և յասպիսիս մարտական անցքն պարզապէս դասնաձև խողովակէ մի կը բարիւնայ, որ հաղի թէ ՚ի միջավայրն քիչ մի ընդարձակած է . ինչպէս

ծծող Զկանց մէջ (Զե 34) : Բայց սովորաբար յայլ ամենայն ՈՂնաւորս՝ մարտական կազմարանի ՚ի միւս մասանց կրնանք զայն որոշակի զանազաննել :

Ի Զկանց պարզ է բայց շատ փոփոխ ձևեր ունի սոկ բարսկերաց մէջ, օրինակ իմն Ծածան ձկան, տարրական է և կերակուրք ամենկին իր մէջ չեն կենար : Յայլը, ինչպէս ՚ի Գայլաձկունս, իջածե կամ գնդածե է . և կան դարձեալ տեսավներ յորս խիստ մուռ է և երկու տարրեր քանկներ կը բաղկանայ : ՚ի Գործառզիս միշտ պարզ է, սովորաբան հազիր կը տարբերի և դէպի իր միջավայրն քիչ շատ կ'ընդարձակի . մերթ ուղղուի է, և մերթ ծուած կամ իւրին իր վրայ ողորած . բայց երբեք անել սպառուած շունի :



Զե 35. Հաւու մարտական հազարառնե


Զե 35-ում մէջ սովորաբար իլաձակէ գրեթէ ուղղ յօձազգիս . առ ՚ի չեղ հակեալ ՚ի Կրայազգիս՝ որ տեսակ մի անել սպառուած կը յօրինէ . մինչեւ ՚ի Մողեղազգիս տանձածն է, և միշտ երկու խորշ կը բաժնուի :

Թունաց ստամդան երեք խոռոշ ունի, որք թէ ձևով և թէ պաշտօնի յիրերաց շատ կը տարրերին, և զանոնք կրնանք երեք առանձին ստամդաներ համարել . սակայն երկու առանձնքերէ ստրցան ընդարձակութիւնն են : Արայինն է հասիթ որ ամէն թունոց մէջ շղթանուիր, և կերակուրք յառաջ քանի զամենայն անմիջապէս սասոր մէջ կ'իննեն (Զե 35) : Կերակրով մի եղած միջոց այնքան կ'ընդարձակի՝ որ արտաքուստ յայնապէս զայն կը տեսնենք : Երկրորդն է գեղջաւատ ստամդու կոչուածն՝ որ խածինն կը յաջորդէ, և որոց կողերն ստամդու քահցող արտազրող գեղջարով իի են : Կերա-

կուրք երրորդ ստամփսի իշնելին առաջ, այս հիւ-
թով լաւ մի կը թանան Հուսկ ուրեմնի բար-
ձիկ կամ բուն ստամփսն կու գայ, որ գեղձա-
ռաս ստամփսէ փոքրիկ սեղմամբ մի կը բաժ-
նուի և անել սպառուածով կը վերջնայ: Մը-
սուս շրջապատք ունեցող քասկ մի է, և իւր
մկնային կամ միջին թաղանթն երկու կարմրա-
գոյն զօրաւոր մոտւկներէ կը բաղկանայ. իսկ
իւր ստուարութիւնն կենդանւոյն աննդեան ծա-
ռայող կերակրոց համեմատ կը տարրերի: Այս-
պէս 'ի Զայլամն, 'ի Կարապ, յԱքաղազ, 'ի
Հնդկահաւ, և այլն, ստուարագոյն է. միշտե՞ 'ի
ձայ, յԱրծիւ, յԱրազիլ, և այլն, ամենա-
նօրք է:

37. Ստնեաւորաց ստամփս. — Բազմաթիւ
Ստնեաւորք Մարդու նման պարզ ստամփս մի
ունին. սակայն ձևոյն և մեծութեան մէջ քա-
նի մի տարբերութիւնք կը նկատենք: Որինակ
իմն, բուն Շաղղակեր կենդանեաց մէջ փոքր է,
երկայն և ստուարակող, և անցքի մի կը նմանի:

Ի Միջատակերու' աւելի պարկի քան թէ անցքի
ձևն ունի, և երկու անել սպառուած կը բաժ-
նուի: Ի բազմաթիւ թանձրամրթիւ, օրինակ
իմն 'ի Զիագետիս, թէ և պարզ է, բայց յայլ և
այս խորչեր կամ յաեկուածներ կը տրոնի խո-
տակեր և ջրապողող կիստազգիք՝ իրերաց յանոր-
գոյ երեք որիշ ստամփսներ ունին, յորոց յե-
տինն դարձեալ բազմաթիւ խորչեր կը բաժ-
նուի. այս պատճառաւ ՚ի սկզբան կարծեցին
թէ այս կենդանիք հինգ, վեց, եօթը կամ
նոյն իսկ դեռ աւելի ստամփսներ ունենան:
Սակայն զիսաւորաբար եղբերաւոր Որոնող կեն-
դանեաց ստամփսն աւելի բազադրեալ է, ինչ-
պէս Եզանց, Ոշխարաց, որոց շատ աւելի ընդ-
արձակ է քան զՄասկերացն, և շրու առան-
ձին ստամփսներէ կը բաղկանայ (Ձև 36): Ա-
ռաջինն է որովայշն ընդարձակագոյն քսն ըզ-
միւս երեքն. փորոյն մեծ մասն կը գրաւէ, և ա-
ւելի անոր ձախակողմն կը գտնուի: Կենդա-
նւոյն կերած կերակուրն անմիջապէս հոս կիշ-



Ձև 38. Որոնողաց ստամփս

նէ, ուր կատարեալ փոփոխութիւն մի բնաւ չի
կրեր: Երկրորդն է ցանց, փոքրագոյն քան զմիւս
երեքն. բոլորանե քսակի մի կը նմանի, և առ-
ջ նայեածքով կարծեա թէ որովայնի յաւե-
լուած մի է: Երրորդն հազարբերթիկ կ'անուա-
նի, վասն զի գրի մը թերթերու նման լի է 'ի
ներքուած ըսա երկայնութեան լայն ծալքերով: Գորրորդն է խախացոց կամ ուռն ստամփսէցն, և անոր
ձևով կենդանւոյն կերածն 'ի խախաց կը
դառնայ:

Թէպէտ և խոսակեր կենդանեաց կերածն
բազմագանակ է, սակայն յինքեան մննդարար
նիւթ քիչ պարունակելով՝ ստամփսի մէջ շատ
տեղ կը գրաւէ և քիչ մնունդ կու տայ, միան-
գամայն դժուարամար է: Ցետին պատճառաւաւ
կերանցոյցի մէջ երկար ատեն կենալու կարօ-
տութիւն ունի:

38. Կերակուր ստամփսի մէջ գոնուած միջոց
կատարուող երևոյք. — Կերակուրք մասն առ-

մասն 'ի ստամփս կ'իշնեն, և հոն իրերաց վրայ
շնորհակուտելով կենդանւոյն քաղցն կը լինանի:
Միթէ ասկից վերջ ստամփսի մէջ դարձեալ
կերակուր յաւելունք՝ կը յափրանանք, ստա-
մփսն կը ծանրանայ. Հուսկ ուրեմն խորշումն
և նողկանք կ'զգանք, յորոց փսխումն կը յաջոր-
գէ: Որշափ որ կերակուրք ստամփսի մէջ կը շեղ-
շակատին, այնքան ևս ստամփսն կ'ընդայնի
և կ'ընդարձակի. արինն հօն աւելի ստամփ-
սեանք կ'ընթանան, գործարան գործունէու-
թիւնն հետզհետէ կ'առաւելու և ժամէ մի վերջ
խախացումն կը սկիվ: Այս գործորոշեան մի-
ջոց կերակուրք ստամփսի մէջ գտնուող հիւ-
թոց հետ կը բառնուին, և մննդարար կոյսն
կամաց կամաց արտաքսուս սկսելով գէպ 'ի
ներքս խախացի կը փոխարիի: Զանազան շարժ-
մունքներով և կծկմամբ մննդարար նիւթք աս-
դին անդին կ'ընթանան. երբեմն ալչ դէպ 'ի
ձախ և երբեմն 'ի ձախսէ գէպ յայ: Ալաշինն
որով կերակուրք գէպ 'ի սոր կ'ուղղակի' զատ

վայր կծիռումն կը կոշենք. իսկ երկրորդն՝ զատ՝ ՚ի վեր կծիռումն։

Երբ այսպէս խախացն ստամբսի մէջ ըստ բաւականի կը պատրաստուի, սովորաբար չըրս կամ հինգ ժամէ եւու բացուելով սորը, անցք կը չնորհէ խախացին ինչնելու ընդերաց մէջ, որ անմիջապէս ստամբսի կը յաջորդեն։


Զ. Մամացումն

39. Մամացումն. — Մամացումն կ'ըսուի՝ արդէն իսկ ՚ի խախաց փխսարկեալ կերակոյն այն պիսինիթոյ մը վերածուիլն՝ որ կարենայ դիրութեամբ յարին դառնալ։ Այս գործողութիւնն որ միանգամայն ընդերական մարտուրիթն ՚ի անուանի, քանի մի եզական հոգվերու ձեռքոք ընդերաց մէջ կը կատարուի։ Ընդերեն՝ զանազան երկայնութիւն և լայնութիւն ունեցող ինքն իր վրայ ողորած խողովակ մի է, և որովայնային

խոռոշի մէջ զետեղուած կը դանուի։ Ի Մասկերո, օրինակ իմն Առիւծոց և Վագերց կարծէ, և երեք անգամ իրենց մարմնոյն երկայնութիւնն ունի։ Ամենակեր կենդանեաց մէջ, ինչպէս ՚ի Մարդու, չափաւոր է, այս ինքն եօթն անգամ մարմնոյն երկայնութեան կը հաւասարի։ Իսկ Խոտակեր կենդանեացն, օրինակ իմն Եզանց, Ուզուոց, Ոչխարաց, չափազանց երկայն է, և գրեթէ քան և եօթն անգամ զիրենք կը չափէ։

Զննդերու կրնանք բաճենել ՚ի Նրբաղի և ՚ի Սուուրադի (Տես Ձև 33)։

40. Նրբաղի. — Նրբաղին երեք մասերէ կը բաղկանայ, որք են, առաջնայի, դատարկայի և զարարայի. անմիջապէս ստամբսի կը յաջորդէ և սորի ձեռքով անոր հետ կը հաղորդակցի։ Սովորաբար ընդերաց երկայնութեան երեք քառորդն է. արտաքուստ սահուն և անթիւ մկնային նետրուներով շնչապատաճ. իսկ նեղքուստ նրբամազ և փշուկալից լորձնաթթաղանթ մի զայն



Ձև 37. Լեռդեր ներդրն երեն

